Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

391

-6 NOV 2011

Մեսրոպեան Դպրոց
Գուլպեն (Բելգիա) 1944

№ 66 Գրքեր-Տարեցի հրատարակություն № 66

Ս.Խ.Լ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հանրային գրադարան
1922
Ա. ՍՅՈՒՐ ՅԱՔՈԲՅԱՆ

ՆԵՂ ՕՐԵՐԻՑ ՄԻԿԸ

ԹԻՖԼԻՍ

Տպարան «ՀԵՐՄԷՍ», Մադրեաճ փողոց 15.

1904 (72)

10 [illegible] 2013 46211

Дозволено Цензурою, 16 Декабря 1904 г. Тифлисъ.

ՆԵՂ ՕՐԵՐԻՑ ՄԷԿԸ

Պատրիկեանը մի հայեացք ձգեց իւր հնացած հագուստին, նայեց կօշիկների ծռուռուած ծայրերին, դուրս եկաւ սենեակից, դուռը փակեց, բանալին գրպանը կոխեց, անցաւ բակի երկայնքով և բարձրացաւ տանտիրոջ բնակարանի ընդարձակ պատշգամը, որը, մաքուր ու կարմրաւուն, պլպլում էր հայելու պէս, առաւօտուայ արևի պայծառ ճառագայթներով ողողուած։ Նրան թւում էր, թէ անասունները, երբ նրանց սպանդանոց են տանում, ճիշտ նոյնը պիտի լինին զգալիս, ինչ որ զգում էր ինքն այդ րոպէին։ Նա մի վտիտ երիտասարդ էր, հաղիւ երեսուն տարեկան, խիստ բարի աչքե-

րով և անվստահ շարժումներով։ Խոհանոցից դուրս եկող իմերէլ ծառային խնդրեց կամացուկ, որ տանտիրոջն իմաց տայ, թէ ինքն ուզում է տեսնել նրան։ Ծառան, չուխայի յետ ծալած երկայն ու լայն թևերը վայր թողնելով, գնաց նրա խնդիրքը կատարելու, իսկ Պատրիկեանը մնաց խոհանոցի մօտ և բաց լուսամուտից նայում էր ներս, որտեղ խոհարարն, ամբողջապէս ըստիակազգեստ, վարժ ձեռքերով փետրահան էր անում նոր մորթած հաւեր և բերանով ինչ-որ պարերգ էր շշվացնում։ Ծառան դուրս եկաւ և հեռուից ձեռքով արաւ նրան։ Պատրիկեանը զգուշօրէն անցաւ պատշգամով, դռան մօտ սրբեց ոտները, ծառայի առաջնորդութեամբ մտաւ ճաշասենեակը, այնտեղից—ընդարձակ ու խիստ բարձր դահլիճը, որը կորած էր հսկայական ծաղկամանների, աթոռների, աթոռակների, բազկաթոռների, սեղանների, գահաւորակների և բազմոցների մէջ, և կանգ առաւ տանտիրոջ առանձնասենեակի առաջ։ Ծառան դուռը բաց արեց, ներս հրաւիրեց նրան, իսկ ինքը հեռացաւ։

Տանտէրը, — խիստ ջղուտ, կարծես բրոնզից ձուլուած մի տղամարդ, մօտ 50—60 տարեկան, սպիտակախառն կոշտ մազերով և սրածայր կարճ մորուքով,—նստած էր թղթերով, թղթապանակներով, գրքերով և անթիւ մանր-մունր բաներով ծանրաբեռնուած առագին գրասեղանի առաջ և գրում էր։

—Ներեցէք, ես՝ իսկոյն,—ասաց նա, մի վայրկեան նայելով այցելուին պենս-նէի վերևից, և շարունակեց գրել։

Պատրիկեանը մնաց կանգնած։

—Խնդրեմ նստեցէք,—ասաց տանտէրը, շարունակելով գրութիւնը։

Պատրիկեանը կամաց նստեց, գլխարկը ծնկների վրայ բռնած, և նայեց շուրջը։ Սենեակը զարդարուած էր, դահլիճի պէս, փարթամօրէն։ Կահաւորանքի մէջ աչքի էր ընկնում ոչ այնքան ճաշակը, որքան փափկակեցութեան թուլութիւնը։ Ուր նայում էր, տեսնում էր գորգ ու թաւշեայ բարձիկներ։

կար և մի անագին գրադարակ ապակեայ դռներով, որի բոլոր դարակները լիքն էին ոսկեկազմ գրքերով՝ զօրքի պէս խիստ կանոնաւոր կողք կողքի շարուած։ Այդ գրադարակն էլ, անշուշտ, սենեակի անհրաժեշտ ճանաչուած կահաւորանքից մէկն էր կազմուած, այլապէս Պատրիկեանը չէր կարծում, թէ տանտէրը ժամանակ ունենար այդ ստուարահատոր գրքերից որևէ մէկը ձեռք առնելու, որովհետև չափազանց զբաղուած էր իւր մասնաւոր և հասարակական գործերով՝—նա գործարանատէր էր, քաղաքային խորհրդի իրաւասու, քաղաքային մի քանի յանձնաժողովների անդամ, բանկի վարչութեան անդամ, կլուբի աւագ և եկեղեցու երէցփոխ։ Պատրիկեանը հայեացքը դարձրեց տանտիրոջ վրայ և տեսաւ, որ նա դրուած է ձեռքի համարձակ շարժումով և անդադար կրծում է վերին շրթունքը ձախ կողմից։

—Նուս, ինչ կըհրամայէք,—ասաց տանտէրը, գրութիւնը վերջացնելուց յետոյ և սև մարմարի ծանր ծծողականը թրխկթրխկացնելով գրած թղթի վրայ։

—Ես...ներեցէք,—արտասանեց Պատրիկեանն իւր ասելիքը նախապատրաստած մարդու շփոթմունքով։—Երեկ գիշեր դուք նորից յիշեցրել էիք սենեակիս վարձը...Ես եկել եմ խնդրելու, որ, եթէ կարելի է, մի քանի օր սպասէք դարձեալ։

Տանտէրը վերցրեց պենս-նէն, արմունկները կրթնեց գրասեղանին և նայեց նրան իւր լուրջ ու եռանդուն աչքերով։

—Եղբայր պատուական,—ասաց նա,—ես, կարծեմ, եօթն օր է, որ սպասում եմ, չէ՞։

Պատրիկեանն աչքերը վայր թողեց։

—Այո, բայց...խնդրում եմ, դարձեալ մի քանի օր...եթէ կարելի է...

—Բանը մի քանի օրուայ մէջ չէ։ Մի քանի օր, ինչո՞ւ չէ, կարելի է սպասել, և տեսնում էք, որ սպասում եմ։ Բայց ցաւն այս է, որ մի քանի օրից յետոյ, երբ դարձեալ ես ինքս ստիպուած կըլինիմ յիշեցնելու ձեր պարտքը, դուք կըգաք ինձ մօտ, ինչպէս այժմ էք եկել, և դարձեալ կըխնդրէք, որ դարձեալ մի քանի օր սպասեմ։ Ես այդ փորձով գիտեմ և այդ բանի վերջը

չեմ տեսնում։ Ուստի մի անգամ առ միշտ կանոն եմ շինել ինձ համար, որ երբ կենդանիներից որևէ մեկը չի վճարում իւր բնակարանի վարձը կանոնաւորապէս, նրան առաջարկում եմ անմիջապէս դատարկել բնակարանը։ Ձեզ էլ ասում եմ. եթէ չէք կարող վճարել, դատարկեցէք սենեակը։ Ես ինքս ամէն ամիս վճարելիքներ ունիմ, և իմ պարտատէրս, բանկը, չի սպասում, որ ես ըսպասեմ։

Տանտէրը խօսում էր վճռական տոնով և սուր-սուր նայում Պատրիկեանի խեղճ ու կրակ դէմքին։

—Ես հասկանում եմ ձեր դրութիւնը,— թոթովեց Պատրիկեանը, թէև ամենևին չէր հասկանում, թէ ինչպէս կարող էր ամսական իւր վճարելիք մի քանի ռուբլին որևէ նշանակութիւն ունենալ այդ հարուստ մարդու համար։—Բայց դուք էլ, խնդրում եմ, մտէք իմ դրութիւնը։ Ես ուսուցիչ էի գաւառում. այժմ դպրոցներ չունինք, և ես անգործ եմ։ Ուզում էի գնալ արտասահման ուսումս շարունակելու. դիմեցի մի քանի բարերարնե-

րի, մերժում ստացայ։ Յետոյ մտայ մի խանութ իբրև հասարակ մի գործակատարյոյս ունէի, թէ խնայողութեամբ այնքան կը հաւաքեմ, որ կարող կըլինիմ ձգտումս իրագործել, բայց հիւանդացայ և խնայած բոլոր փողերս ծախսեցի։ Հիմա ես ոչինչ չունիմ. օրեր են պատահում, որ քաղցած եմ մնում...

—Ի՞նչ հարկաւոր է, որ այդ բանները պատմում էք ինձ,—շտապեց ընդհատել Պատրիկեանին տանտէրը, և նրա բրոնզեայ դէմքի վրայ երևացին դժգոհութեան պարզ նշաններ։—Դուք կրթուած երիտասարդ էք, և ձեր պատուասիրութիւնը չպէտք է թոյլ տայ, որ ուրիշի պատմէք ձեր ժանաւոր կեանքը։ Ես էլ հաղար ու մի ցաւ ու դարդեր ունիմ, նստեմ պատմե՞մ ձեզ։ Լաւ չէ, այդ լաւ չէ։ Ասում էք՝ մի քանի օր,—համեցէք, կըսպասեմ. միայն ես չեմ հասկանում, թէ որտեղից պիտի կարողանաք վճարել, քանի որ ասում էք, թէ ոչինչ չունիք և անգործ էք։

—Ես...գիտէք...ես...մի-երկու գիրք ու-

նիմ տպագրած,—ասաց Պատրիկեանը շփոթուած, կարծես ամաչելով, որ այդպիսի բան ունի արած.—երկար ժամանակ է, որ չեմ մտել գրավաճառանոց. այսօր կը մտնեմ. երևի այնքան ծախած կըլինին, որ...

—Դուք գրող էք,—հարցրեց տանտէրը, զարմացած նայելով նրա շփոթուած աչքերին։

—Այո։

—Ի՞նչ էք գրում։

Պատրիկեանը գլուխը բարձրացրեց և նայեց նրան ամօթխածութեան ժպիտով։

—Ո՞վ գիտէ...գրում եմ, էլի...

—Դէ, դուք գիտէք,—ասաց տանտէրը և վերկացաւ։ — Ձեր կողքի կենողը, այն հրէայ այրի կինը, որ դանակներ և կողպէքներ է ծախում բակի դռան մօտ, տասը տարի է, որ կենում է, և չեմ յիշում մի ամիս, որ ամենայն ճշտութեամբ վճարած չլինի սենեակի վարձը, չնայելով, որ մէնմինակ այնքան էլ ահագին ընտանիք է պահում։ Ասելս այն է, որ... Ինչևիցէ, ցտեսութիւն։ Մի քանի օր կը սպասեմ։

Պատրիկեանը դուրս եկաւ ինչ-որ յի-

մաբական մի ժպիտ դէմքին։ Պատշգամում հանդիպեց տանտիրոջ նիհար ու տգեղ աղջկան և նրա կոկետ դաստիարակչուհուն, որոնք թևանցուկ զբօսնում էին աշնանային արևի ախորժելի ջերմ ճառագայթների տակ և ջարդում էին ֆրանսերէն։ Երկայն պատշգամով անցնելիս աշխատում էր քայլել այնպէս, որ նրանք չտեսնեն իւր անգրավարտիկի մաշուած-պատառոտուած տոտերը։ Նա իջաւ բակը և դէպի փողոց տանող լայն անցքի մէջ, բակի դռան մօտ, տեսաւ հարևան հրէայ կնոջը՝ նստած տախտակէ հասարակ մի աթոռակի վրայ, երկայն ուռնեղ սեղանի կողքին, որի վրայ որոշ կանոնաւորութեամբ դարսուած էին ամեն տեսակ դանակներ, մկրատներ, կողպէքներ, պորտմոնէներ և այլ մանրուքներ։ «Երջանիկ կին. համ ինքն է ապրում իւր ահագին ընտանիքով, համ էլ սենեակի վարձը տալիս է ամենայն ճըշտութեամբ»—մտածեց Պատրիկեանը և նրա մօտով անցնելիս բարևեց նրան։

—Ձայնե՞մ շեգողնեա նե բղալի գաղեաչոյի վադը (ինչո՞ւ այսօր տաք ջուր չվեր-

ցրիք),—կանչեց նրա յետեւից հրէայ կինը ռուսերէն, հրէաներին յատուկ առոգանութեամբ ա-ն շ և ր-ն ղ հնչելով։

Պատրիկեանը կանգ առաւ և նայեց նրա բարի գիրուկ դէմքին նոյն յիմարական ժպիտով։

—Որովհետեւ շաքարս հատել էր,—պատասխանեց նա մի տեսակ անհոգութեամբ։

Հրէայ կինը զարմանքից մինչեւ անգամ վեր կացաւ իւր աթոռակից։

—Ա՛յ քեզ բան,—բացականչեց նա։—Շաքար էլ կըտայինք, ի՞նչ կայ որ...

—Չէ, առանց այն էլ ես շատ եմ պարտական ձեզ...

—Ի՞նչ պարտական... Ամեն օր միքանի բաժակ տաք ջուր տալով մեծ բան ենք արել, ինչ է։ Շաքար չունէիք, կասէիք. մի երկու կտոր շաքարն ի՞նչ բան է որ...

—Բան չկայ, մի օր թէյ չըխմելով չենք մեռնիլ,—ասաց Պատրիկեանը, ծիծաղեց նոյն անհոգութեամբ և շտապեց դուրս գնալ փողոց։

Այդ փողոցն իսկապէս քաղաքի վաճառաշահ շուկաներից մէկն էր՝ լի աղաղակով և ժխորով։ Ժամը տասին մօտ էր։ Արեւը նոր սկսել էր հալել գիշերը կուտրեների վրայ նստած եղեամը, որն այժմ ջուր դառած՝ կաթկթալով թափւում էր երկայն ջրախողովակներով ներքեւ և մայթերի վրայ փոքրիկ գրեր էր կազմում։ Պատրիկեանը զգաց, որ ստուերի մէջ օդը բաւական ցուրտ է ու խոնաւ, և, ձեռքերն անդրավարտիկի գրպանները կոխած, աշխատում էր գնալ այն տեղերով, ուր արեւը թափում էր մաքուր երկնքից իւր ճառագայթները։ Սակայն արեւի տակ էլ նրա մարմինը սառստում էր. նրան թւում էր, թէ դրա պատճառը ոչ թէ աշնանային եղանակն է և այն, որ ինքը տաք չի հագնուած, այլ այն, որ այդ առաւօտ ոչ թէյ է խմել և ոչ որեւէ բան կերել։ Մրսում էին առաւելապէս ձեռքերը, որոնց ինչքան էլ աշխատում էր կուչ ածել իւր երկարամեայ սիւրտուկի կարճ թեւերի մէջ, այնուամենայնիւ դաստակները բաց էին մնում։

Պատրիկեանի առաջին գործն այն եղաւ,

որ մտաւ գրավաճառանոց։ Ցոյս ունէր, թէ այնքան կըստանար, որ, սենեակի վարձը հանելուց յետոյ, դեռ մի բան էլ կը մնար իրրև ապրուստի փող։ Սակայն, գրավաճառանոցում նրան ասացին, որ վերջին երեք ամսուայ ընթացքում իւր երկու գրքերից մէկն ամենևին չի ծախուել, իսկ միւսից ծախուել է հինգ օրինակ միայն և, կոմիսիայի տոկոսը հանելուց յետոյ, նրան յանձնեցին 1 ռ. 20 կ.։ Պատրիկեանը, հիասթափուած ժպիտը դէմքին, փողը գրպանն ածեց և դուրս եկաւ գրավաճառանոցից՝ ճնշուած այնպիսի մի զգայական տակ, որպիսին ունենում են անսովոր մուրացիկները ողորմութիւն ստանալուց յետոյ։ Ամօթի հնուաստացման կարմիրն երեսին, մի բոպէ կանգ առաւ դուրսը գրավաճառանոցի լուսամուտի առաջ, որի թեթև քրտնած ապակիների միջից մի հայեացք ձգեց ցուցանակի վրայ հըպարտօրէն շարուած ռուսերէն փարթամ գրքերին, ապա նրանց կողքին մի անկիւնում ամօթխածութեամբ կուչ եկած հայերէն վտիտ գրքոյկներին, յետոյ երեսը շուռ տուեց և

հեռացաւ՝ խորասուզուած ինչ-որ դառն մըտածմունքների մէջ։ Նա մոռացաւ թէյի փափագն էլ, քաղցն էլ և, որովհետև ուրիշ տեղ չունէր գնալու և մրսում էր, քայլերն ուղղեց դէպի խմբագրատունն։

Խմբագրատանն, ինչպէս միշտ, այս անգամ ևս նստած էր մէն-մինակ քարտուղարը—չորիկ-մորիկ մի երիտասարդ պարզ ակնոցով և աջ ձեռքի ճկոյթի վրայ աճեցրած կէս վերշոկաչափ սրածայր եղունգով,—և արագ գրում էր երկայն ու նեղ թղթերի վրայ, ճկոյթը խիստ որոշակի առանձնացրած հարևան մատներից։ Պատրիկեանը, իրրև պարապ մարդ և իրրև ձրի աշխատակից, խմբագրատան ամենօրեայ այցելուն էր, այնպէս որ քարտուղարն ու նա, որոնք մըտերիմ բարեկամներ էին, այլ ևս չէին բարևում իրար տեսնելիս։ Այս անգամ ևս Պատրիկեանը մտաւ քարտուղարի սենեակն առանց բարևելու, նստեց գրասեղանի ծայրին, վերցրեց տեղական ռուս լրագրներից մէկը, որոնցից քարտուղարը լուրեր էր թարգմանում, և սկսեց կարդալ։ Տեղական լուրե-

ՀԱՅԿ. ԽՍՀ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱ
Публичная библиотека
7/XI-1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

րից մէկը կարդալուց յետոյ հարցրեց.

—Ինչո՞ւ այս լուրը չես նշանակել։

—Ո՞ր լուրը,—հարցրեց քարտուղարը, շարունակելով գրել։

—Զափինեանի մասին։ Հրաւիրուած է այս ձմեռ արքունական թատրոնում երգելու համար։

—Հէրն անիծեմ,—սրտանց արտասանեց քարտուղարը, առանց գլուխը բարձրացնելու թղթի վրայից։—Մեզ ինչ օգուտ։

Պատրիկեանն, ըստ երևոյթին, համամիտ եղաւ նրա հետ, որ Զափինեանի արքունական թատրոնում երգելուց ոչ մի օգուտ չպիտի ունենար հայ հասարակութիւնը, ուստի ոչինչ չառարկեց։

Ներս մտաւ տպարանական փոքրիկ աշակերտը մրոտ երեսով և կապոյտ բլուզով, որի մէջ սրթսրթում էր ցրտից նրա վտիտ մարմինը։

—Նութ,—ասաց նա, իւն ու հնչելով։

—Սպասիր մի քիչ,—ասաց քարտուղարը, և գրիչը նրա ձեռքին սկսեց շարժուել աւելի արագ։ Նա շտապով գրեց վերջացրեց թուղթը և գրած թղթերի հետ միասին ծալեց տուեց աշակերտին։—Ահա, տար և որ էլի գալու լինիս, հարցրու քանի կոլոն է պակաս։

Աշակերտը դուրս գնաց, գլխարկը փողոցում ծածկելով։

—Դէհ, Պատրիկ, պարապ մի նստիր,—ասաց քարտուղարն ակնոցն ուղղելով և նոր գործի պատրաստուելով։ — Նիւթ չունինք, մի բան գրիր ձեռաց։

—Տրամադրութիւն չունիմ, — ասաց Պատրիկեանը մելամաղձօրէն։

—Ես հեստիկ է որ խեղդուում եմ, այ, տրամադրութիւնից։

—Դու մեքենայ ես դարձել։

—Շատ մի խօսիր, գրիր։ հոգիս դուրս է գալիս։ Դիշերն էլ մինչև ժամը երկուսը տպարանումն եմ անցկացրել, որովհետև սրբագրիչը հիւանդացել է։

—Ո՞ւր է խմբագիրը, ինչո՞ւ չի օգնում։

—Գնացել է փող ճարելու, որովհետև տպարանատէրը սպառնացել է, որ եթէ այսօր փող չտանայ, համարը բաց չի թող-

նիլ։ Էգուց-էլօր բաժանորդագրութիւն ենք բանալու, և յանկարծ — այսպիսի խայտառակութիւն... Գրիր, գրիր, խօսելու ժամանակը չէ։

—Ի՞նչ գրեմ։

—Ինչ ուզում ես, միայն թէ գրիր։

Պատրիկեանը դանդաղօրէն մի քանի թերթ թուղթ քաշեց առաջը, գրիչը թաթախեց թանաքամանի մէջ, կարճ ժամանակ մտածեց և գրեց վերնագիրը՝ «ԵՐԵՔ ԱՄԻՍ ԵՒ ՀԻՆԳ ՕՐԻՆԱԿ ՄԻԱՅՆ»։ Այստեղ նա կանգ առաւ, ճակատը շփեց և, երկար մտածելուց յետոյ, սկսեց. «Այս օրերս պատահեցի մեր երիտասարդ զորոնցերից մէկին, որի համար կրիտիկան կամ այն, ինչ որ մեզնում կրիտիկա է անուանւում, միաբերան վկայել է, որ բաւական ձիրք ունի։ Նա զանգատուեց ինձ, որ անգին նեղութիւններով հրատարակած իւր մի գրքից երեք ամսում վաճառուել է հինգ (հարիւր չկարծէք) հատ միայն։ Այս իրողութիւնը շատ լաւ ծանրաչափ կարող է լինել ցոյց տալու համար մեր հասարակութեան ընթերցասիրութեան չափը եւ, միեւնոյն ժամանակ, շատ դառն մտածմունքների առիթ է տալիս մեր գրականութեան ապագայի մասին։ Մեր հասարակութիւնը...»։ Պատրիկեանը նորից կանգ առաւ, մտածեց, մտածեց, յետոյ գրիչը վայր դրեց և ասաց.

—Այստեղ ոչինչ չի կարելի գրել. ժամանակս փետացան։

—Տо, գրիր, է,—բղաւեց քարտուղարը, որի գրիչը նորից արագ շարժւում էր թղթի վրայ։—Վաղուց է՞, որ այդքան քընքշացել ես։ Կարծես թէ քո սենեակը սրանից տաք լինի։

Պատրիկեանը սառած ձեռքերը շփեց իրար, բերնի գոլորշիով տաքացրեց մատների ծայրերը, նորից առաւ գրիչը, գիծ քաշեց «Մեր հասարակութիւնը» բառերի վրայ և շարունակեց. «Ճիշտ է, չի կարելի պնդել, թէ մեր հասարակութիւնն ընթերցասէր չէ, բայց...»։

—Կարելի՞ է մտնել,—լսուեց մի ուժեղ բարիտոն։

Պատրիկեանը և քարտուղարը միաժամանակ բարձրացրին գլուխները և նայեցին

դէպի նախասենեակի դուռը։ Այնտեղ կանգնած էր մի թիկնաւէտ երիտասարդ բեխերն ու մորուքը սափրած և ցիլինդրը ձեռքին։

—Խնդրեմ,—մեքենայաբար արտասանեց քարտուղարը։

Այցելուն մտաւ խիստ անձնավստահ քայլերով և ներկայացրեց իրեն.

—Չափինեան։ Երևի գիտէք, որ ես հրաւիրուած եմ այս սեզոնին արքունական թատրոնում երգելու։

—Ա՛խ, ինչպէս չէ,—արտասանեց քարտուղարը, մեքենայաբար վերկենալով տեղից և ակամայ յարգանքով սեղմելով երգչի ձեռքը։—Խնդրեմ նստեցէք։

Նա շփոթուած էր այցելուի գեղեցիկ ու ազդու արտաքինից և, մանաւանդ, նրա անունից, որը բաւական հռչակ էր սկսել վայելել ռուս մամուլի և հասարակութեան մէջ։

Չափինեանն արագ նստեց, ցիլինդրը դրեց գրասեղանի վրայ, ձեռնոցը ձգեց ցիլինդրի մէջ, յետոյ տեսնելով, որ գրասեղանը

ծածկուած է փոշով, ցիլինդրի տակ մի լրագիր դրեց։

—Խմբագիրն այստեղ չէ՞,—հարցրեց նա։

—Դժբաղդաբար, ոչ,—պատասխանեց քարտուղարը սարկաստիկ-յարգական ժպիտով և ակամայ ուշադրութիւն դարձրեց երգչի կարմիր ատլասի փողկապի վրայ հուբհրատին տուող խոշոր ադամանդի վրայ։ Նա նորից նստեց և չէր իմանում ինչպէս անի, որ այցելուի աչքից ծածկի իւր կեղտոտ մանժետները։

—Իբրև հայ երգիչ, իմ պարտքս համարեցի այցելել ձեր խմբագրատունը,—ասաց Չափինեանը։—Երևի գիտէք, որ ես սովորել եմ Իտալիայում, որտեղից, սրանից վեց տարի առաջ, ինձ հրաւիրեցին Օդեսսա։ Երկրորդ տարին երգեցի Իրկուտսկում, յետոյ մի-մի սեզոն երգել եմ Խարկով, Կիև, Մոսկուա, իսկ անցեալ սեզոնին երգում էի Պետերբուրգում։ Այժմ եկել եմ Թիֆլիս։ Թիֆլիսն երաժշտական քաղաք է և կարծում եմ, որ կըգնահատի ինձ։ Ներեցէք,

դուք ստանում էք մայրաքաղաքի թերթերը։

—Ինչպէս չէ։

—Ուրեմն անշուշտ կարդացած կըլինիք ինձ վերաբերեալ ռեցենզիաները։ Ամենքը գովում են։ Մի քանի հայատեաց թերթեր միայն, ինչպէս «Новое Время»-ն և «Свѣтъ»-ն, աշխատում էին ինձ գլորել, որովհետև հայ եմ և չեմ ծածկում, որ հայ եմ, բայց չաջողեցան։ Մի քանի ստրկահոգի հայեր խորհուրդ էին տալիս ինձ, որ ես ազգանունս եան վերջաւորութիւնը ջնջեմ, որպէս զի չերևայ թէ հայ եմ, ինչպէս անում են ուրիշ հայ երգիչներից մի քանիսը, բայց ես այդ բանը ցածութիւն համարեցի։ Ես հայ եմ և հայ էլ պէտք է մեռնեմ։ Օդեսայի անտրբպլենեօրս փորձեց ինձ նոր հրաւիրած ժամանակ աֆիշի վրայ ազգանունս գրել Զափինի, բայց ես շատ քաղաքավարութեամբ հասկացրի նրան, որ ոչ մի պայմանով թոյլ չեմ տալ իտալացի մկրտելու ինձ, չնայելով որ իտալացի երգիչների անունը շատ յարգի է Ռուսիայում։ Կեղծիքը պատարակելի է ամեն բանում, իսկ այստեղ

կեղծիքը հաւասարազօր կըլինէր ազգուրացութեան, որն աւելի ևս պախարակելի է։ Այնպէս չէ՞։

—Ի հարկէ,—հաժաձայնեց քարտուղարը նոյն ստրկական ժպիտը դէմքին։

Երգիչը խօսում էր երկար և բացառապէս իւր մասին։ Նրա ձայնը հնչում էր առողջ և ինքնավստահ։

—Ինչևիցէ, — ասաց նա և յանկարծ վերկացաւ։—Ես ձեզ չխանգարեմ։ Իմ խոնարհ յարգանքներս պ. խմբագրին։ Յոյս ունիմ, որ նա, ինչպէս և դուք, շնորհ կըբերէք լսելու ինձ։ Իմ առաջին դեբիւտը լինելու է ամսոյս տասին։ Երգելու եմ Անեգինը։ Յետոյ դուրս կըգամ «Մազեպա»-ի, «Ինգոր»-ի, «Կուպեց Կալաճնիկով»-ի, «Ցարսկոյա Նեւեստա»-ի, «Ժիզն զա Ցարեա»-ի, «Ռուսլան եւ Լիւդմիլա»-ի, «Ռուսալկա»-ի և ուրիշ օպերաների մէջ։ Ցտեսութիւն։

Զափինեանն ամուր և երկար սեղմեց քարտուղարի ձեռքը, թեթեակի գլուխ տուեց սեղանի ծայրին կուչ եկած Պատրիկեանին և դուրս գնաց նոյնպիսի արագ քայլերով,

ինչպէս որ մտաւ, յատակը թրխկթրխկացնելով իւր պլպլան կօշիկների խիստ բարձր ու բարակ կրունկներով։ Քարտուղարը մինչև դուռը ճանապարհ դրեց նրան և երբ վերադարձաւ, ձեռքերը խփեց իրար և բացականչեց ապշած.

—Փահ... Տեսա՞ր, Պատրիկ։ Ճանաչում ե՞ս՝ ով էր։ Երեկ-մէկէլ օրուայ քելեխ ուտող տիրացուն էր, է... Խմբագիրը պատմում է, որ երբ երէցփոխական ընտրութեան վերաբերեալ յայտարարութիւն էր բերում, չէր համարձակւում դռան շէմքից առաջ գալ, իսկ հիմա... իւր պարտքն է համարել այցելութիւն տալու խմբագրին... Ցիլինդրի տակ լրագիր դրեց, որ չփոշոտուի...Տեսա՞ր նրա փողկապի ադամանդը... Գնացել ես գրող ես դառել, վայ, գրողը տանի քեզ, Պատրիկ, գրողը... ինձ էլ քեզ հետ,—աւելացրեց քարտուղարը և գնաց նստեց իւր տեղը։

—Դու ինձ այս ասա. հիմա լուրը կը-գրես, չէ՞,—հարցրեց Պատրիկեանը, հեգնօրէն ժպտալով։

Քարտուղարը պատասխանի տեղ ձեռքերը տարածեց խաչելութեան պէս, ուսերը վեր քաշեց կոմիքական տարակուսանքով, կարճ ժամանակ մտախոհութեան մէջ ընկաւ, յետոյ յանկարծ նայեց ծոցի ժամացոյցին և բացականչեց ոչ այնքան զայրացած, որքան զարմացած.

—Ինչքա՞ն էլ ժամանակ խլեց անիծուածը... Իսկ տպարանում նիւթ չկայ։ Գրբիր, գրբիր, Պատրիկ, մինչև որ տեսնենք ինչ է դուրս գալիս այս էշի մարտիրոսութիւնից։

—«Մանիր, մանիր, իմ ճախարակ...»,—արտասանեց Պատրիկեանը, ծիծաղեց, առաւ գրիչը և պատրաստուեց շարունակել սկսած յօդուածն անսիրտ և դառնացած, ինքն էլ չիմանալով ում և ինչի դէմ։

Իսկ այդ միջոցին քարտուղարն արդէն գրում էր իւր մանր ու փութկոտ գրերով՝ «Մեր հայրենակից երգիչ Զափինեանը հրաւիրուած է այս սեզոնին երգելու Թիֆլիսի արքունական թատրոնում։ Իտալիայում իւր արուեստը կատարելագործելուց յետոյ, նա վերջին վեց տարուայ ընթացքում երգել է Ռու-

սայի գանգաձև քաղաքներում, ի միջի այլոց՝ Մոսկուայում եւ Պետերբուրգում, ուր, տեղական թերթերի վկայութեամբ, մեծ աջողութիւն է ունեցել։ Թիֆլիսում նա առաջին անգամ բեմ է ելնելու ամսոյս 10-ին Զայկովսկու «Եւգենիյ Անեգին» օպերայի մէջ, Անեգինի դերում»։

Նա ուզում էր մի քանի խօսք ևս աւելացնել, հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրելով հայ տաղանդի վրայ, բայց, մոտածելուց յետոյ, բաւական համարեց գրածը, նայեց Պատրիկեանին և, տեսնելով որ նա գրում է շատ դանդաղ և անդադար գլուխը քորելով ասաց՝

—Պատրիկ ջան, շուտ արա, թէ չէ հրէս որտեղ որ է, կըգայ պստիկ հոգեառս և «նուբ» կըպահանջի։

Մտաւ էքսպեդիտորը՝ պոտուից ստացուած մի կոյտ լրագրներ և նամակներ ձեռքին։ Քարտուղարն ամենից առաջ վրայ ընկաւ նամակներին և սկսեց աչքէ անցկացնել։ Նա այնքան վարժուել էր, որ մի քանի տող վերևից, մի քանի տող մէջտեղից և մի քանի

տող վերջից կարդալուց յետոյ հասկանում էր ամբողջ նամակի բովանդակութիւնը և իսկոյն էլ վճռում՝ կարելի՞ էր տալ, թէ ոչ։

—Վա՛հ, այս անիծուածները կարծես խօսքը մէկ են արել, որ գրեն քահանաների և տիրացուների մասին,—բացականչեց նա մի քանի նամակներ աչքէ անցկացնելուց յետոյ։—Քահանայ և տիրացու, տիրացու և քահանայ... Կարծես թէ էլ ուրիշ բան չկայ գրելու, ես ձեր...

Եւ զայրացած քարտուղարի բերանից ակամայ դուրս թռան ինտելիգենտ մարդուն անվայել մի քանի խօսքեր քահանաներից և տիրացուներից դուրս ուրիշ նիւթ չգտնող թղթակիցների հասցէին։ Նա վերցրեց այդ նամակները և ուզում էր պատռել ու ձգել գրասեղանի տակ դրուած զամբիւղը, բայց յիշելով, որ տպարանում նիւթ չկայ, մի կողմ դրեց։ Նոյն կարգով շարունակեց աչքի անցկացնել մնացած նամակները և, ինչպէս երևում էր, այդ նամակներն ևս անպէտք էին, որովհետև նա իւր երկայն ու չոր մատներով ջղայնօրէն ոլորում ու փետրում էր

ցանցառ բեխի ծայրերը։ Այնուհետև, երբ բոլոր նամակները աչքէ անցկացրեց պրծաւ, խոնարհուեց սեղանի վրայ և սկսեց ուղղել ամենից առաջ այն նամակները, որոնք քիչ թէ շատ հետաքրքրութիւն ունէին։ Նա ջընջում էր անխնայօրէն անագին պարբերութիւններ, երբեմն ամբողջ երեսներ և տեղը գրում էր մի քանի տող միայն. ջնջում, փոխում կամ աւելացնում էր այս կամ այն տառը, պեղանտի նախանձախնդրութեամբ և համբերութեամբ պահպանելով լրագրի ուղղագրութիւնը, որի ստեղծողն ինքն էր։

Մինչդեռ Պատրիկեանը, սուս ու փուս նստած սեղանի ծայրին, շարունակում էր իւր յօդուածը, այլ ևս ուշադրութիւն չդարձնելով սենեակում տիրող ցրտին։ Մի ժամից յօդուածն արդէն պատրաստ էր։ Նա գրած թերթերը դարսեց իրար վրայ ըստ թուահամարների, դրեց քարտուղարի առաջ և վեր կացաւ։

—Ի՞նչ է, դու արդէն գնո՞ւմ ես,—հարցրեց քարտուղարը, գլուխը բարձրացնելով և նայելով նրան իւր պլպլան ակնոցի միջից։

—Հա։ Ես բոլորովին սառեցի այստեղ։ Գնամ տեսնեմ ինչ եմ անում։ Այսօր բան չեմ առել բերանս. թէյ էլ չեմ խմել։ Տես այդ յօդուածը,—անսիրտ եմ գրել,—թէ որ բանի նման է՝ տպիր, թէ որ չէ՝ զամբիւղը ձգիր։ Ցտեսութիւն։

Եւ Պատրիկեանը դիմեց դէպի դուռը, մի բոպէ կանգ առաւ նախասենեակում ինչ-որ անվճռականութեան մէջ, մեքենայաբար թափ տալով ձեռքին բռնած գլխարկը, յետոյ կամաց յետ դարձաւ և ասաց աւելի ևս կամաց կարծես վախենալով, որ մի երրորդ անձ կարող է լսել իրեն.

—Չե՞ս կարող ինձ մի հինգ ռուբլի փոխ տալ։

—Հինգ ռուբլի՞,—բացականչեց քարտուղարը, կարծես ապշած, որ նա այդքան մեծ գումար է պահանջում։

—Հա, խնդրում եմ։ Սենեակիս վարձը պէտք է տամ։

Քարտուղարն արագօրէն հանեց իւր

ժաշուած-ջարդուած պորտմոնէն, բաց արեց, մէջի փողը—սև ու սպիտակ դրամներ—թափեց գրասեղանի վրայ և սկսեց համարել, դրամները մէկ-մէկ քաշելով մի կողմ.—10, 20, 25, 35, 50, 55, 58, 60, 62 կոպէկ։ Ահա իմ ունեցած բոլոր կապիտալը։ Թէ որ սրանից 5 ռուբլի դուրս կըգայ, վերցրու։ Ինչպամիս է՝ ռոճիկ չեմ ստացել, կըհաւատամ թէ չէ...

Պատրիկեանը ձեռքով յուսահատական մի շարժում արաւ և դուրս գնաց։

ԱՂԲԻՒՐԻ

Նպատակն է հայ մատաղ սերունդը գաստիարակել, ճշմարիտ լուսաւորութեան շաւիղը նրան ցոյց տալ։ Սէր դէպի ընութիւնը, գիտութիւնը և մեր ծաւալը—ահա թէ ինչ է ուսուցանում ԱՂԲԻՒՐԸ։ Բարի նախանձ դէպի փանմ ու ազնիւը և ատելութիւն ու արհամարհանք դէպի չարն ու վնասակարը—ահա ԱՂԲԻՒՐԻ ուղղութիւնը։ ԱՂԲԻՒՐԻ նոխ ծրագիրը հնարաւորութիւն է տալիս մեզ ընդարձակ ծաւալով եւ մագազանոխ բովանդակութեամբ յոյս ունենալ մեր հանդէպ եւ օգտակար ու հեսաՀրՀրական դարձնել այն, եթէ հայերը սոսկ տարեկան 3 ր. իրանց բաժանորդագրութեամբ պահպանեն ԱՂԲԻՒՐԸ։ Պրեմիան ստանում են Աղբիւր-Տարազ միաւնոյն հասցէով ստացող բաժանորդները, վճարելով 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.)։ Միայն ԱՂԲԻՒՐ 3 ր. արս. 5 ր.։ Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція жур. АГБЮРЪ, Tiflis, Caucase. Rédaction de la Revue ACBÜR.

Խմբագիր-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

Հ. Ս. Խ. Հ. ՀԱՅԿԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Ս. Խ. Հ. Պետական Գրադարան
7/31-1922
Ի. ՄԱՅԻՆԻՆՅԱՆ ԱՆՎԱՆ

ՏԱՐԱԶ

գեղարվեստական, գրական, գիտական, հասարակական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթը հրատարակվում է ՃՈՒ եւ ԸՆԴԱՐՁԱԿ ԾՐԱԳՐՈՎ։ Տարազի նպատակը, ուղղությունն ու ձգտումն է հայերի մէջ տարածել ուղիղ հայեացք դէպի ԳԵՂԵՑԻԿԸ, ԲԱՐԻՆ ԵՒ ՕԳՏԱԿԱՐԸ։ Գեղարվեստը, գրականութիւնը, գիտութիւնը, գաղափարակութիւնն ու քննադատութիւնը կազմում են ՏԱՐԱԶԻ հիմքը։ Երկրորդական լրագրական բաժանմունքները—լուրեր, թղթակցութիւն, հեռագիր, կառավարչ. կարգադրութիւն, ժամանակագրութիւն, կենսագրական, ճանապարհորդական, նորութիւններ, ծրագրներ, խորհրդակցութիւն և այլն՝ ՏԱՐԱԶԸ դարձնում են անհրաժեշտ թերթ ժողովրդի բոլոր խաւերի համար։ Իսկ զարմալիք, տնային տնտեսութիւն, կար, ձև, ձեռագործ, թատրոն, երաժշտութիւն եւ այլն աւելի են մատչելի անում ՏԱՐԱԶԸ ամեն ընտանիքի համար։ ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 ր., արտասահման 10 ր.։ ՊՐԵՄԻԱՆ ստանում են միմիայն նրանք, որոնք բաժանորդ են Ազբիւր-Տարազին եւ վճարել են 10 ր. (արտասահմանում 18 ր. կամ 50 ֆր.)։ Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

Հասցէն՝ Тифлисъ, редакція журнала ТАРАЗЪ, կամ Tiflis (Caucase Rédaction de la Revue TARAZ).

Խմբագիր-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0351721

46211

891.99
Ц-40